ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 28-Ի
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի մարտի 28-ին ժամը 15:00-ին քաղաք Էջմիածին, Մովսես Խորենացի 2 հասցեում տեղի ունեցավ Վաղարշապատ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի արտահերթ նիստը, որին մասնակցում էր Վաղարշապատ համայնքի ավագանու 17 անդամ, հիմք ընդունելով գրանցման արդյունքները՝ այդ մասին հայտարարեց նիստն արձանագրողը:

Վաղարշապատ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի արտահերթ նիստին հրավիրված են համայնքային կառույցների ներկայացուցիչներ, համայնքապետարանի աշխատակիցներ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 64-րդ հոդվածի 2-րդ մասով՝ նիստը վարում է համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արսեն Պետրոսյանը:

Նիստի արձանագրումն ապահովում է աշխատակազմի քարտուղարի լիազորությունները ժամանակավոր իրականացնող, իրավաբանական բաժնի պետ Կ. Եսայանը:

Նիստն սկսվեց Հայաստանի Հանրապետության և համայնքի հիմներով:

Նիստն անցկացվում է առցանց հեռարձակմամբ:

Հրավիրված նիստին հարգելի պատճառներով՝ արձակուրդում գտնվելու պատճառով բացակայում է համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը:

Ավագանու նիստին չներկայացած անդամների բացակայությունը համարվում է անհարգելի՝ հարգելիության վերաբերյալ տեղեկատվություն չներկայացնելու հիմքով:

Նիստը վարողը ավագանու անդամներին ներկայացրեց նիստի օրակարգի հարցը և առաջարկեց քննարկել ու հաստատել օրակարգը:

Օրակարգի նախագիծը դրվում է քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 17 անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ - 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Վաղարշապատ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի 2023 թվականի մարտի 28-ի արտահերթ նիստի օրակարգը և քննարկել առաջադրված հարցերը, այն է՝

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 166-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ԵՎ «ՍՊԻՐԻԴՈՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-ՆԵՐԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԾՈՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻՆ ԼՐԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5.ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄՍԸ ԱՆՀԱՏՈՒՑՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունեց թիվ 24 որոշումը:

Օրակարգի 1-ին հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լուսինե Քալաշյանը:

Ներկայացնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի n 166-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագիծը:

Նիստը նախագահողի առաջարկով Լ.Քալաշյանը ներկայացրեց բյուջեի փոփոխության բացատրությունը, ավելի պարզ և օրինակելի ձևով:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամը հերթագրվեց: Հարցերը տալու համար ըստ հերթագրման հաջորդականության՝ նիստը վարողը հայտարարեց հարց տվողների անուն ազգանունը՝ Հրաչյա Ավետիսյան և Արմեն Դավթյան:

Հրաչյա Ավետիսյան: Սույն փոփոխությունը նախատեսու՞մ է ավագանիների սենյակի կահավորանքը:

Պատասխանեց Լուսինե Քալաշյանը: Կահավորանքի ձեռք բերումը նախատեսված է եղել հիմնական բյուջեի հաստատման ժամանակ:

Արմեն Դավթյան: Բյուջեի մեջ նախատեսված եղե՞լ է այլ դոտացիաի գումարը:

Պատասխանեց Լուսինե Քալաշյանը: Ոչ այլ դոտացիա նախատեսված չի եղել բյուջեում:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 17 անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ - 16
դեմ – 0
ձեռնպահ – 1

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 25 որոշումը:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լուսինե Քալաշյանը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի սեփականության 2022 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 17 անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ - 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 26 որոշումը:

Օրակարգի 3-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց աշխատակազմի կրթության և մշակույթի բաժնի պետ Լիլիթ Հակոբյանը:

Ներկայացնելով Վաղարշապատի համայնքապետարանի «Մակար Եկմալյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց» և «Սպիրիդոն Մելիքյանի անվան թիվ 2 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ների գեղագիտական զարգացման գծով ուսուցում իրականացնող մանկավարժներին լրավճար սահմանելու մասին որոշման նախագիծը:

Նիստը նախագահողին հետաքրքրվեց կա՞ն արդյոք դիմողներ գեղեգիտական ուսուցման գծով, ինչին Լ.Հակոբյանը պատասխանեց, որ դիմողներ և հետաքրքրվողներ կան, սակայն ընդունման ընթացակարգը դեռ չի սկսվել:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամը հերթագրվեց: Հարցերը տալու համար ըստ հերթագրման հաջորդականության՝ նիստը վարողը հայտարարեց հարց տվողների անուն ազգանունը՝ Էդվարդ Ափոյանը:

Էդվարդ Ափոյան: Սույն փոփոխությունը նախատեսու՞մ է ավագանիների սենյակի կահավորանքը:

Պատասխանեց Լիլիթ Հակոբյան: Կահավորանքի ձեռք բերումը նախատեսված է եղել հիմնական բյուջեի հաստատման ժամանակ:

Էդուարդ Ափոյան: Արդյո՞ք մնացորդ հանդիսացող 3000 ՀՀ դրամը համայնքի ծառայությունների մատուցման մասով փակում է համայնքի ծախսը:

Պատասխանեց Լիլիթ Հակոբյանը: Տվյալ պարագայում համայնքը ծախսեր չի կրում, ուստի ընդհակառակը 3000 ՀՀ դրամը եկամտի տեսքով մտնում է համայնքի բյուջե:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 17 անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ - 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 27 որոշումը:

Օրակարգի 4-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Մհեր Մկրտչյանը:

Ներկայացնելով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 17 անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ - 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 28 որոշումը:

Օրակարգի 5-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Միհեր Մկրտչյանը:

Ներկայացնելով Համայնքի սեփականությանը պատկանող հողամասը անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրելու համար համաձայնություն տալու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 17 անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ - 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 29 որոշումը:

Օրակարգի հարցերը սպառվելուց հետո Ավագանու նիստը հայտարարվեց փակված: